«ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՐՑՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ» ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ»

«ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ԽԹԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

Սույն փաստաթուղթը մշակվել է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության (ԻՀԱ) «Ազդարարման բազմակողմանի խթանում Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Բաց Կառավարման Գործընկերության (ԲԿԳ) աջակցությամբ՝ Եվրոպական Միության (ԵՄ) կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն հանուն բարեվարքության՝ Արևելյան գործընկերության համար» ծրագրի շրջանակներում:
Սույն փաստաթղթում արտահայտված է հեղինակի՝ ԻՀԱ դիրքորոշումը, որի համընկնումը ԲԿԳ և ԵՄ դիրքորոշման հետ պարտադիր չէ:

Հրապարակումից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

© ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ԵՐԵՎԱՆ, 2023

https://armla.am/

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ 2
Միջազգային փորձ և միջազգային ստանդարտներ 3
Ա) ԵՄ ստանդարտներ 3
Բ) Միջազգային փորձ 5
Ազգային օրենսդրության և պրակտիկայի վերլուծություն 9
Ա. Ազդարարման հարցերով պատասխանատու անձանց նշանակելու լայն հայեցողության կիրառում 10
Բ. Ազդարարման հարցերով պատասխանատու անձանց դերի և գործառույթների հստակեցում . 10
Գ. Ազդարարման հարցերով պատասխանատու անձանց կարողությունների զարգացման և դրա հետ կապված միասնական պրակտիկայի բացակայություն 11
Դ. Ազդարարման հարցերով պատասխանատու անձանց վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնության բացակայություն 12
Եզրակացություն 15
Ա) Միջազգային փորձ և միջազգային ստանդարտներ 15
Ա) Ազգային օրենսդրության և պրակտիկայի վերլուծություն 15
Առաջարկություններ 17

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱլԳ	Արևելյան գործընկերության
ԵՄ	Եվրոպական միություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանց

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

Ներքին ազդարարման համար պատասխանատու անձանց վերաբերյալ միջազգային փորձի տեսանկյունից ոլորտային բարեփոխումներ իրականացնող երկրների համար կարող է ուսուցանելի լինել Եվրոպական միության (ԵՄ) ստանդարտները, որոնք ներդրվում են ԵՄ անդամ պետություններում: Այս կապակցությամբ, սույն վերլուծության շրջանակներում ուսումնասիրության է ենթարկվել 2019 թվականի հոկտեմբերի 23-ին ԵՄ խորհրդարանի ընդունած No 2019/1937 հրահանգը, որը սահմանում է ԵՄ-ի իրավունքի խախտումների մասին հաղորդում ներկայացրած անձանց պաշտպանության չափորոշիչներ:

Արևելյան գործընկերության (ԱլԳ) փորձը ազդարարման պատասխանատու անձանց մասով ևս ուսումնասիրվել է: Որպես ԱլԳ երկիր առանձնացվել է Ուկրաինայի փորձը, որը ըստ էության բխում է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի (ՏՀԶԿ) ստանդարտներից[1]:

Ա) ԵՄ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

2019 թվականի հոկտեմբերի 23-ին ԵՄ խորհրդարանն ընդունել է No 2019/1937 հրահանգը, որը սահմանում է **ԵՄ-ի իրավունքի խախտումների մասին հաղորդում ներկայացրած անձանց պաշտպանության չափորոշիչներ**[2]: Վերջինիս համաձայն՝ անդամ պետություններից պահանջվում է Եվրոպական հանձնաժողովին տրամադրել հիշյալ հրահանգի իրականացման և կիրառման վերաբերյալ բոլոր անհրաժեշտ տեղեկությունները: Ըստ հրահանգի՝ այն անձինք, որոնք աշխատում են պետական կամ մասնավոր կազմակերպությունում կամ իրենց աշխատանքի և գործունեության բնույթից ելնելով այդպիսի կազմակերպության հետ գտնվում են հարաբերությունների մեջ, հաճախ առաջինն են իմանում այդ համատեքստում ծագող սպառնալիքների կամ հանրային շահերին ուղղված վնասների մասին: Հաղորդելով միության օրենսդրության այն խախտումների մասին,

---

[1] ՏՀԶԿ (2022) Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողության մոնիտորինգի 5-րդ փուլի պիլոտային զեկույց. Հակակոռուպցիոն բարեփոխումներ Ուկրաինայում: Հասանելի է՝ https://www.oecd-ilibrary.org/docserver/b1901b8c-en.pdf?expires=1697202384&id=id&accname=guest&checksum=984354AD1D6CF0967634994B8BFC6385

[2] Եվրոպական միության գրասենյակ: Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2019 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ (EU) 2019/1937 Հրահանգ՝ ԵՄ-ի իրավունքի խախտումների մասին հաղորդում ներկայացրած անձանց պաշտպանության չափորոշիչների մասին: Հասանելի է՝ https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:32019L1937

որոնք կարող են վնաս հասցնել հանրային շահին, այդ անձինք հանդես են գալիս որպես «ազդարարներ» և դրանով իսկ կարևոր դեր են խաղում նման խախտումները բացահայտելու, կանխելու և հասարակության բարեկեցությունը ապահովելու հարցում: Այնուամենայնիվ, պոտենցիալ ազդարարներին հաճախ չեն հայտնում իրենց մտահոգությունները կամ կասկածները՝ վախենալով վնասակար գործողություններից: Այս համատեքստում, ազդարարների հավասարակշռված և արդյունավետ պաշտպանության ապահովման կարևորությունը գնալով ավելի է ընդունվում ինչպես միության, այնպես էլ միջազգային մակարդակում:

Հաղորդում ներկայացնող անձինք սովորաբար ավելի հակված են իրականացնել ներքին ազդարարում, եթե արտաքին ազդարարում կատարելու պատճառ չունեն: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ազդարարների մեծամասնությունը հակված է ներքին ազդարարումներ ներկայացնել այն կազմակերպության ներսում, որտեղ նրանք աշխատում են: Հիշյալի ապահովման համար հրահանգը նախատեսում է մի քանի կարևոր կարգավորումներ, որոնք ներկայացված են ստորև:

Ըստ հրահանգի՝ (47) ԵՄ օրենսդրության խախտումների դեպքերը արդյունավետ հայտնաբերելու և կանխարգելելու համար կենսական նշանակություն ունի, որպեսզի համապատասխան տեղեկատվությունը օպերատիվ կերպով հասնի խնդրի աղբյուրին մոտ գտնվող անձանց, որոնք կարող են հետաքննել և, հնարավորության դեպքում, վերացնել այն: Հետևաբար, որպես սկզբունք, հաղորդում ներկայացնող անձանց պետք է խրախուսել նախ՝ օգտագործեն ներքին ազդարարման ընթացակարգը և հաղորդումը ներկայացնեն իրենց գործատուին, եթե այդպիսի ընթացակարգերը հասանելի են նրանց և անձը ողջամտորեն ակնկալում է, որ դրանք պրակտիկայում «աշխատող» ընթացակարգեր են: Սա, մասնավորապես, վերաբերում է այն դեպքերին, երբ հաղորդում ներկայացնող անձը վստահ է, որ խախտումը կարող է արդյունավետորեն լուծվել համապատասխան կազմակերպության ներսում, և որ իր նկատմամբ վնասակար գործողության վտանգ չկա:

Ազդարարման ընթացակարգերը կարող են ապահովվել **ներքին ազդարարման համակարգով** այն **անձանց** կամ ստորաբաժանման կողմից, որոնք **նշանակված են հենց այդ նպատակով** կամ տրամադրվել են արտաքին աղբյուրից՝ երրորդ անձանց կողմից:

Ի լրումն վերոգրյալի, Միության 9-րդ հոդվածը նվիրված է ներքին ազդարարման և դրա ընթացքի ապահովման ընթացակարգերին: Այս ընթացակարգերը, ի թիվս այլնի, ներառում են՝

գ) **անաչառ անձի** կամ ստորաբաժանման **նշանակումը**, որը իրավասու է **ապահովել հաղորդումների ընթացքը**: Այս դերում կարող է հանդես գալ այն **նույն անձը** կամ ստորաբաժանումը, **որը ստանում է հաղորդումները և որը կապահովի հաղորդում ներկայացրած անձի հետ կապը, և անհրաժեշտության դեպքում, նրան կդիմի լրացուցիչ տեղեկատվություն լրացուցիչ տեղեկատվության համար,** ինչպես նաև կապահովի հաղորդում ներկայացրած **անձի հետ հետադարձ կապը**.

դ) **(գ)** պարբերությունում նշված նշանակված անձի կամ ստորաբաժանման կողմից **մանրակրկիտ մոնիտորինգի իրականացում՝** ներքին ազդարարման ընթացակարգերով ներկայացված հաղորդումների ընթացքը:

Բ) ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ

ՈՒԿՐԱԻՆԱ

(*Ուկրաինայի փորձը հիմնված է նաև ՏՀԶԿ ստանդարտների վրա)

Ազդարարման ոլորտի լիազորությունները վերապահված են Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալությանը՝ 2014 թվականի հոկտեմբերի 14-ին ընդունված Ուկրաինայի «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի հիման վրա[3]: Նույն օրենքով նախատեսված է կոռուպցիայի վերաբերյալ կասկածների, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների, ինչպես նաև այլ իրավախախտումների մասին փաստական տվյալներ ունենալու դեպքում **ներքին ազդարարման ընթացակարգեր**: Այս ընթացակարգը ենթադրում է ազդարարների կողմից ներկայացրած տեղեկատվության պաշտպանված ծանուցում (ներառյալ՝ անանուն) մարմնի ղեկավարին **կամ լիազորած անձին**, իրավաբանական անձին, որտեղ ազդարարը աշխատում է, ծառայում է կամ վերապատրաստում է, կամ նրանց անունից կատարում է աշխատանք, ինչպես նաև վերադաս մարմնին, որի **լիազորած անձը** վերահսկում է իրենց ենթակա ձեռնարկություններում, հիմնարկներում և կազմակերպություններում հակակոռուպցիոն օրենսդրության պահպանումը:

Գործակալությունը պարտավոր է համագործակցել ազդարարների հետ, **ապահովել նրանց իրավական և այլ պաշտպանությունը,** տալ հրամաններ, որոնք պահանջում են վերացնել ազդարարների աշխատանքային և այլ իրավունքների հետ կապված խախտումները, ինչպես նաև՝ վարույթ հարուցել ազդարարների հանդեպ կիրառված վնասակար գործողությունների գործերով:

Բացի այդ, Գործակալությունը ազդարարներին տրամադրում է **խորհրդատվական պարզաբանումներ**, **մեթոդական և խորհրդատվական աջակցություն**՝ էթիկական վարքագծի մասին օրենսդրության ակտերի կիրառման, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում գործառույթներ իրականացնելու համար լիազորված անձանց և նրանց հավասարեցված անձանց գործունեության շահերի բախման կանխման և կարգավորումների վերաբերյալ, «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքով և դրա կատարումն ապահովող այլ

[3] «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենք, հասանելի է՝ https://zakon.rada.gov.ua/laws/show/1700-18#Text

իրավական ակտերով սահմանված այլ դրույթների կիրառման, ինչպես նաև ազդարարների պաշտպանության միջոցների վերաբերյալ:

Համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները և նրանց տեղակալները կամ **պատասխանատու պաշտոնատար անձինք**, որոնց լիազորությունները ներառում են ներքին ազդարարման ընթացակարգերի կազմակերպումը, կոռուպցիայի վերաբերյալ կասկածների, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների, ինչպես նաև այլ իրավախախտումների մասին հաղորդումների ստացումը, ազդարարների հետ համագործակցությունը, իրենց գործողությունների համար հաշվետու և պատասխանատու են համապատասխան մարմնի կամ իրավաբանական անձանց իրենց ղեկավարներին:

Կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման ստորաբաժանման իրավասու ղեկավարը պետք է ընտրի և նշանակի ազդարարների պաշտպանության լիազորությունների իրականացման համար **այդ նպատակով առանձին պատասխանատու անձի**:

Ազդարարների պաշտպանության ոլորտում լիազորությունները իրականացնելու համար կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման լիազորված ստորաբաժանումները (պատասխանատու անձինք) իրավունք ունեն.

- համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումներից կամ իրավաբանական անձից պահանջել փաստաթղթեր, այդ թվում՝ սահմանափակ հասանելիությամբ (բացառությամբ պետական գաղտնիքի) տեղեկատվություն պարունակող, և դրանց պատճենները.
- հրավիրել և հարցազրույց անցկացնել այն անձանց հետ, որոնց գործողությունները կամ անգործությունը կապված է ազդարարի հաղորդած փաստական տվյալների հետ, այդ թվում՝ մարմնի, հիմնարկի կամ կազմակերպության ղեկավարին, կամ նրա տեղակալներին,
- ազդարարի և նրա հարազատների խախտված իրավունքների վերաբերյալ դիմել Ազգային գործակալություն,
- համապատասխան մարմնի կամ իրավաբանական անձի ղեկավարին ներկայացնել «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքը խախտելու համար մեղավոր անձանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին,
- իրականացնել «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքով նախատեսված այլ լիազորություններ՝ ուղղված ազդարարների հաղորդումների համակողմանի քննարկմանը և նրանց իրավունքների ու ազատությունների պաշտպանությանը:

Միաժամանակ պետք է նշել, որ ՏՀԶԿ-ը Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողության մոնիտորինգի 5-րդ փուլի պիլոտային զեկույցի շրջանակներում գնահատելով Ուկրաինայի

հակակոռուպցիոն բարեփոխումները[4], նշել է, որ ազդարարման ընթացակարգերի վերաբերյալ տեղեկացվածությունը և հաղորդումը կազմելու հնարավորությունների մասին հաղորդակցությունը բավարար չեն:

Բացի այդ, ըստ նույն աղբյուրի՝ ազդարարման ընթացակարգերը չեն ընկալվում որպես ինքնավար: Ներքին ազդարարման նկատմամբ Կոռուպցիայի կանխարգելման գործակալության վերահսկողությունը բարելավելու տեղ ունի: **Ազդարարման պատասխանատու անձինք** պետք է **անցնեն վերապատրաստումներ**: Ազդարարումներին հետադարձ կապ չի ապահովվում: Քաղաքացիները վախենում են վնասակար գործողություններից[5]:

ՉԵԽԻԱ

Չեխիայի «Ազդարարների պաշտպանության մասին ակտ» թիվ 172/2023 օրենքը ուժի մեջ է մտել 2023 թվականի օգոստոսի 1-ից: Այս ակտի ընդունմամբ Չեխիան կատարեց իր պարտավորությունը և ավարտին հասցրեց ԵՄ ազդարարման մասին հրահանգի իրականացումը[6]:

Ըստ հիշյալ օրենքի՝ ազդարարներին պաշտպանելու միջոցները և մեխանիզմները պետք է ներդրվեն առանձնացված կառույցներում: Դրանք, մասնավորապես, որոշ պետական մարմիններ են կամ պայմանագրային կողմեր (հիմնականում՝ գնումների ոլորտում[7]) (որոշ բացառություններով, օրինակ՝ փոքր քաղաքապետարանները և իրավաբանական անձինք, որտեղ համապատասխան օրացուցային տարվա հունվարի 1-ի դրությամբ աշխատողների թիվը 50-ից պակաս է, որոնք հիմնականում ֆինանսավորվում են ռեգիոնների կամ քաղաքապետարանների կողմից, կամ որտեղ ռեգիոններն ու քաղաքապետարանները վերահսկիչ ազդեցություն ունեն)[8].

Որպես կանոն, այս կառույցներին տրված է ազատություն որոշել իրենց մոտ ներդրվող ազդարարման ընթացակարգերը: Այս նպատակով, ակտը սահմանում է մի շարք պահանջներ, որոնց

---

[4] ՏՀԶԿ (2022) Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողության մոնիտորինգի 5-րդ փուլի պիլոտային զեկույց. Հակակոռուպցիոն բարեփոխումներ Ուկրաինայում: Էջ 60, հասանելի է՝ https://www.oecd-ilibrary.org/docserver/b1901b8c-en.pdf?expires=1697202384&id=id&accname=guest&checksum=984354AD1D6CF0967634994B8BFC6385

[5] ՏՀԶԿ (2022) Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողության մոնիտորինգի 5-րդ փուլի պիլոտային զեկույց. Հակակոռուպցիոն բարեփոխումներ Ուկրաինայում: Էջ 60, հասանելի է՝ https://www.oecd-ilibrary.org/docserver/b1901b8c-en.pdf?expires=1697202384&id=id&accname=guest&checksum=984354AD1D6CF0967634994B8BFC6385

[6] https://www.dreport.cz/en/blog/the-whistleblower-protection-act-has-come-into-force-what-is-important-to-know/

[7] https://ceelegalmatters.com/magazine-articles/9381-issue-10-7/24540-new-obligations-related-to-the-introduction-of-whistleblowing-in-the-czech-republic

[8] https://www.dreport.cz/en/blog/the-whistleblower-protection-act-has-come-into-force-what-is-important-to-know/

պետք է համապատասխանեն ներքին ազդարարման ընթացակարգերը: Այդ պահանջներից են օրինակ հետևյալները.

- **ներքին ազդարարման ընթացակարգը** պետք է հնարավորություն տա ազդարարողներին իրենց հաղորդումները ներկայացնել (i) գրավոր, (ii) բանավոր, և (iii) ազդարարի պահանջի դեպքում անձամբ՝ հաղորդումները գնահատելու համար **նշանակված պատասխանատու անձանց**.
- միայն **պատասխանատու անձինք** կարող են ունենալ հասանելիություն ազդարարների հաղորդումներին.
- ազդարարները պետք է հստակ ժամկետներում տեղեկացվեն իրենց ներկայացրած հաղորդման ստացման և վերջնական գնահատման մասին:

Օրենքի իմաստով՝ **իրավասու (պատասխանատու) անձը** պատասխանատու է ծանուցման համար, մասնավորապես՝ ստանալ և գնահատել ծանուցման իսկությունը, առաջարկել ձեռնարկել միջոցներ՝ ուղղելու իրավիճակը կամ կանխելու որ իրավաչափ գործողությունները, լինել անաչառ, ապահովել գաղտնիությունը[9]:

Կառույցները իրենց կայքէջերում պետք է հրապարակեն տեղեկատվություն այն մասին, թե ինչպես կարելի է հաղորդում ներկայացրել ներքին ազդարարման ընթացակարգով՝ պարտադիր բնույթ ունեցող այլ տեղեկատվության հետ միասին, ինչպես օրինակ՝ **պատասխանատու անձի կոնտակտային տվյալները**, ներառյալ՝ հեռախոս, էլեկտրոնային փոստ, կապի և հաղորդակցման այլ միջոցներ[10]:

Ներքին ազդարարման ընթացակարգով նախատեսված է նաև հաղորդում ներկայացնող անձին՝ օրենքից բխող իր իրավունքների և պարտականությունների մասին խորհրդատվության տրամադրման հնարավորություն, որի վերաբերյալ իրականացվում է հաշվառում:

---

[9] https://www.gtnews.cz/en/articles/here-it-is-the-wistleblower-protection-act-has-been-passed/

[10] https://cms.law/en/int/expert-guides/whistleblower-protection-and-reporting-channels/czech-republic , https://www.gtnews.cz/en/articles/here-it-is-the-wistleblower-protection-act-has-been-passed/

ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) կառավարության 15.03.2018 թվականի «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց ենթակա մարմիններում ազդարարման հաղորդումների վերաբերյալ վիճակագրության վարման կարգը սահմանելու մասին» N 272-Ն որոշման[11] համաձայն՝ **ազդարարման հարցերով պատասխանատու անձ է** հանդիսանում «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով[12] նախատեսված մարմնի կամ կազմակերպության ղեկավարի կողմից համապատասխան իրավական ակտով նշանակված աշխատողը, որը «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի[13] և ՀՀ կառավարության վերոնշյալ՝ N 272-Ն որոշման համաձայն՝ իրականացնում է ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների հաշվառումը և ձևակերպումը:

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե հաղորդումն ստացել է ազդարարի անմիջական ղեկավարը կամ նրա վերադասը կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձ կամ նույն հոդվածի 1-ին մասով չնախատեսված անձը[14], ապա նա պարտավոր է հաղորդումն անհապաղ փոխանցել իրավասու մարմնի ղեկավարին կամ նրա լիազորած անձին: Փաստացի, օրենքը իրավասու մարմնի ղեկավարի կողմից լիազորած անձին դիտարկում է որպես ազդարարման հարցերով պատասխանատու անձ:

Բացի այդ, «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 9.1 հոդվածը սահմանում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները (ՏԻՄ) վարում են ազդարարման հետ կապված համապատասխան վիճակագրություն իրենց և իրենց ենթակա մարմիններում ստացված

---

[11] ՀՀ կառավարության 15.03.2018 թվականի N 272-Ն որոշումը հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=180232

[12] «Ազդարարման համակարգի մասին» ՀՕ-97-Ն ՀՀ օրենքը հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172131

[13] «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման, ձևակերպման օրինակելի ձևը, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

[14] «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի իմաստով՝ չնախատեսված են համարվում այն անձինք, որոնք չեն համարվում ազդարարի անմիջական ղեկավար, կամ ազդարարի անմիջական ղեկավարի վերադաս կամ ազդարարի անմիջական ղեկավարի վերադասի նկատմամբ վերահսկողություն իրականացնող անձ կամ իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձ:

հաղորդումների վերաբերյալ, որը փաստացի իրենց իրավասությունների սահմանում իրականացվում է ազդարարման հարցերով պատասխանատու անձանց կողմից:

Հարկ է նշել, որ հայաստանյան պրակտիկայի վերլուծության արդյունքները հանգեցնում են նրան, որ ազդարարման հարցերով պատասխանատուների ոլորտում առկա են մի շարք խնդիրներ, որոնք, իրենց հերթին, նպաստում են ազդարարման համակարգի ոչ արդյունավետ գործարկմանը: Այս խնդիրները կարելի է դասակարգել ըստ ստորև թվարկվածների, որոնք խիստ փոխկապակցված են միմյանց հետ:

Ա. ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԼԱՅՆ ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄ

Ինչպես արդեն նշվեց, ՀՀ կառավարության 15.03.2018 թվականի N 272-Ն որոշման համաձայն՝ **ազդարարման հարցերով պատասխանատու անձ է** հանդիսանում «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով նախատեսված մարմնի կամ կազմակերպության ղեկավարի կողմից համապատասխան իրավական ակտով նշանակված աշխատողը, որը «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ կառավարության վերոնշյալ՝ N 272-Ն որոշման համաձայն՝ իրականացնում է ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների հաշվառումը և ձևակերպումը: Նաև հարկ է նշել, որ պատասխանատու անձին նշանակելու լիազորություն ունեցող օրենքով նախատեսված մարմինը հանդիսանում է իրավասու մարմինը, իսկ իրավասու մարմինների շրջանակում ընդգրկված են ՀՀ պետական մարմինները, ՏԻՄ-երը, պետական և համայնքային կազմակերպությունները, հանրային նշանակության կազմակերպությունները: Այսինքն, փաստացի ստացվում է, որ ՀՀ-ում գործող պետական մարմնի և ՏԻՄ-երի ղեկավարներին տրված է լայն հայեցողություն ազդարարման հարցերով պատասխանատու անձանց նշանակելու հարցում: Ընդ որում, այդ պաշտոնում նշանակում իրականացնելու համար ընտրության և նշանակման որևէ ընթացակարգ նախատեսված չէ, թեկնածուի համար որևէ նվազագույն չափանիշներ, այդ թվում՝ մասնագիտական պահանջներ և անձնական հատկանիշներ, որոնք հատուկ են բարեվարք հանրային ծառայողին, սահմանված չեն:

Բ. ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ԴԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՀՍՏԱԿԵՑՈՒՄ

Ազդարարման հարցերով պատասխանատու անձանց դերի և գործառույթների նկարագիրը հստակ սահմանված չէ: Իհարկե, օրենսդրության վերլուծությունից պարզ է դառնում, որ նրանք պատասխանատու են հիմնականում հետևյալ խումբ գործողությունների համար.

- համապատասխան մարմնում ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների հաշվառում և ձևակերպում,
- համապատասխան մարմնում ստացված հաղորդումների վերաբերյալ ազդարարման հետ կապված համապատասխան վիճակագրություն վարում:

Ավելին, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պատասխանատու անձինք համադրում են իրենց այս գործառույթը իրենց մեկ այլ գործառույթի հետ, սակայն հիշյալի մասով որևէ իրավական կարգավորում առկա չէ:

Ընդհանուր առմամբ, ներքին ազդարարման դեպքում պատասխանատու անձանց լիազորությունների այս նեղ շրջանակը խնդրահարույց է, և կարող է խոչընդոտել ներքին ազդարարման զարգացմանը: Օրինակ՝ կարևոր լիազորություններից պետք է լինի ներքին ազդարարման դեպքերով, ըստ անհրաժեշտության, խորհրդատվության և պարզաբանումների տրամադրման ընթացակարգեր, երբ պոտենցիալ ազդարարը հարցեր ունենալու դեպքում կիմանա որ մարմնում առկա է պատասխանատու անձ, որը կարող է օգնել վերջինիս:

Համեմատության համար նշենք, օր օրինակ՝ բարեվարքության հարցերով կազմակերպիչների և հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուի դերը և գործառույթները հստակեցված են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով, և վերջիններս ունեն օրենքով ամրագրված կարգավիճակ: Նրանց գործառույթների շրջանակից որոշակի առումով արդեն պարզ է դառնում նաև այն չափանիշները և նվազագույն պահանջները, որոնք պետք է բավարարեն ազդարարման հարցերով պատասխանատուները:

Այս համատեքստում պետք է նաև ընդգծել, որ օրենքով նախատեսված չեն ազդարարման հարցերով պատասխանատու անձանց իրավունքները և պարտականությունները:

Գ. ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ելնելով ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների եզրափակիչ գնահատման և մոնիթորինգի զեկույցի արդյունքներից [15], որտեղ ամփոփված են 2019-2023 թվականների ընթացքում կատարված

[15] https://moj.am/storage/files/pages/pg_7967694028641_AC_M-A_Report_final_2023-compressed_1_.pdf

աշխատանքները, ինչպես նաև կատարված ուսումնասիրություններից, պարզ է դառնում, որ ազդարարման հարցերով պատասխանատուների կարիքների գնահատում չի կատարվում, որոնց հիման վրա կիրականացվեն կարողությունների զարգացման վերապատրաստումներ: Բացի այդ, առկա չէ ազդարարման հարցերով պատասխանատուների գործունեության ապահովման ուղեցույցներ և մեթոդական ցուցումներ, նյութերը, որոնք կապահովեն նաև աս ոլորտում միասնական պրակտիկան:

Կարողությունների զարգացման և վերապատրաստումների ուղղությամբ միջոցառումների բացակայությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ՀՀ-ում առկա չէ ազդարարման ոլորտում պատասխանատու իրավասու կենտրոնական մարմին, որը պատասխանատու կլինի ներքին ազդարարման պատասխանատու անձանց գործնական ուսուցման և վերապատրաստման ապահովման համար: Այս մասին մանրամասն վերլուծություն և առաջարկություններ ներկայացված են «Ազդարարման համակարգի հայկական մոդելի տեսլականը. Ազդարարման հարցերով պատասխանատու մարմինների դերերի հստակեցում և կենտրոնական մարմնի ձևավորում» փորձագիտական վերլուծության շրջանակներում:

Դ. ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 15.03.2018 թվականի N 272-Ն որոշման համաձայն՝ պատասխանատու անձի անունը, ազգանունը, պաշտոնը, իր հետ կապի միջոցների (փոստային հասցե, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե) վերաբերյալ տվյալները տեղադրվում են օրենքով նախատեսված մարմնի կամ կազմակերպության պաշտոնական ինտերնետային կայքէջում, իսկ պաշտոնական ինտերնետային կայքի բացակայության դեպքում՝ աշխատողների կամ օրենքով նախատեսված մարմնի կամ կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից օգտվող անձանց համար հասանելի (տեսանելի, իսկ լսողական կամ շարժողական խնդիրներ ունեցող անձանց համար՝ մատչելի) վայրում:

Չնայած վերոգրյալ կարգավորմանը, ազդարարման հարցերով պատասխանատու անձանց մասին անհրաժեշտ տեղեկությունները հասանելի են ոչ բոլոր պետական և ՏԻՄ մարմինների կայքէջերում, իսկ որոշ դեպքերում այդ տեղեկությունները թերի են: Օրինակ՝ ՀՀ արդարադատության նախարարության կայքէջում հասանելի է ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձանց ցանկը՝ իրենց հեռախոսահամարներով հանդերձ[16]: Էլեկտրոնային

[16] https://moj.am/page/594

փոստի հասցեներ հասանելի չեն: Գլխավոր դատախազության կայքէջում առանձին էջերով նշված են արտաքին[17] և ներքին[18] ազդարարման պատասխանատուները, սակայն կոնտակտային որևէ տվյալ առկա չէ: Իսկ ՀՀ կառավարության կայքէջում թեպետ ներքին և արտաքին ազդարարման պատասխանատուների բաժինը բացված է, սակայն այն չի գործում և համապատասխան տեղեկությունը հասանելի չէ[19]:





Բացի այդ, տարբեր պետական մարմինների կայքէջերում[20] տեղադրված են ազդարարման հետ կապված տեղեկություններ, որոնք հանդիսանում են «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի որոշ հատվածների մեջբերումներ: Այս տեղեկությունները բավականաչափ հանրամատչելի չեն: Բացատրված չէ, օրինակ՝ թե որ դեպքերում կարող են դիմել ազդարարման հարցերով պատասխանատու անձին, ինչպես կարող է պատասխանատու անձը օգնել ազդարարին, արդյոք այս անձին դիմելու դեպքում ապահովվում է նրա՝ որպես ազդարարի գաղտնիության իրավունքը:

Հարկ է նշել, որ վեր հանված խնդիրների մի մասը ներկայացված է նաև ՀՀ 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության նախագծում: Մասնավորապես՝ ազդարարման համակարգի խնդիրներից է, ի թիվս այլնի, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարներին ազդարարման հարցերով պատասխանատու անձանց նշանակելու լայն

---

[17] https://www.prosecutor.am/staffs/101

[18] https://www.prosecutor.am/staffs/100

[19] https://www.gov.am/am/404/

[20] Տե՛ս օրինակ՝ https://www.supervision.am/internal_and_external_alarms/ , https://moj.am/page/594 , https://www.mfa.am/hy/int_ext_re/

հայեցողության վերապահումը, ազդարարման հարցով պատասխանատուների ընտրությունը և նշանակման ընթացակարգը և այլն[21]:

[21] ՀՀ 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության նախագիծ, էջեր 44-45: Հասանելի է՝ https://www.e-draft.am/projects/5986/about

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ա) ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

Այսպիսով, ամփոփելով միջազգային փորձի և միջազգային ստանդարտների վերլուծությունը, կարելի է եզրակացնել, որ՝

- ներքին ազդարարման դեպքում ազդարարման պատասխանատու անձինք են նշանակվում անաչառ սուբյեկտները, որոնք ապահովում են հաղորդումների ընթացքը, հաղորդում ներկայացրած անձի հետ հաղորդակցությունը և հետադարձ կապը.
- ազդարարման պատասխանատու անձինք նշանակվում են այդ պաշտոնում հատուկ այդ գործառույթների իրականացման համար, և նրանց գործառույթը չի համադրվում իրենց՝ այլ գործառույթների հետ.
- ազդարարման պատասխանատու անձանց լիազորությունները բավականին լայն են. դրանք ներառում են ներքին ազդարարման ընթացակարգերի կազմակերպումը, կոռուպցիայի վերաբերյալ կասկածների, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների, ինչպես նաև այլ իրավախախտումների մասին հաղորդումների ստացումը, ազդարարների հետ համագործակցությունը.
- ազդարարման պատասխանատու անձինք իրենց գործողությունների համար հաշվետու և պատասխանատու են համապատասխան մարմնի կամ իրավաբանական անձանց իրենց ղեկավարներին.
- ազդարարման պատասխանատու անձինք պետք է անցնեն վերապատրաստումներ։

Ա) ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ամփոփելով ազգային օրենսդրության և պրակտիկայի վերլուծությունը, կարելի է եզրակացնել, որ՝

- գործող օրենսդրությամբ սահմանված է միայն ներքին ազդարարման հաղորդումների հաշվառման և ձևակերպման համար պատասխանատու անձանց նշանակելու և վերջիններիս մասին աշխատողներին տեղեկացնելու պահանջ, ինչը միջազգային ստանդարտների համաձայն, նույնը չէ, ինչ ազդարարման ընթացակարգերի

(channels), օրինակ՝ հատուկ ներքին ազդարարումներ ներկայացնելու նպատակով ստեղծված հեռախոսագծի, էլեկտրոնային փոստի կամ վեբ ձևի (web-form), ստեղծումը: Այս մասով մանրամասն վերլուծություն ներկայացված է «Ազդարարների տեսակների կատարելագործում» փորձագիտական վերլուծությամբ.

- «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով հստակ սահմանված չէ՝ թե ով է հանդիսանում ազդարարման հարցերով պատասխանատու անձը,
- պետական մարմինները և ՏԻՄ-երը ազդարարման հարցերով պատասխանատու անձանց նշանակելու հարցում ունեն լայն հայեցողություն, այդ նշանակումները կատարվում են իրավասու մարմնի ղեկավարի իրավական ակտով,
- ազդարարման հարցերով պատասխանատու անձանց համար նախատեսված չեն այդ պաշտոնում ընտրության և նշանակվելու ընթացակարգեր, սահմանված չեն թեկնածուին ներկայացվող նվազագույն չափանիշներ, այդ թվում՝ մասնագիտական պահանջներ և անձնական հատկանիշներ, որոնք հատուկ են բարեվարք հանրային ծառայողին,
- ազդարարման հարցերով պատասխանատու անձանց դերը և գործառույթների շրջանակը հստակեցված չէ, նրանց վերապահված իրավասությունների շրջանակը նեղ է,
- ազդարարման հարցերով պատասխանատու անձանց համար առանձին կերպով նախատեսված չեն իրավունքներ և պարտականություններ, իսկ պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ այս անձինք իրենց՝ պատասխանատուի գործառույթները համադրում են իրենց մեկ այլ գործառույթի հետ, չնայած նման կարգավորումը բացակայում է,
- ազդարարման հարցերով պատասխանատու անձանց նրանց կարիքների գնահատում չի կատարվում, որոնց հիման վրա կիրականացվի կարողությունների զարգացման վերապատրաստումներ, առկա չեն ազդարարման հարցերով պատասխանատուների գործունեության ապահովման ուղեցույցներ, մեթոդական ցուցումներ և նյութեր,
- ազդարարման հարցերով պատասխանատուների կողմից ներքին ազդարարման դեպքերում նախատեսված չէ խորհրդատվության և պարզաբանումների տրամադրման ընթացակարգեր,
- ազդարարման հարցերով պատասխանատու անձանց վերաբերյալ ամբողջական և համակարգված տեղեկություն հասանելի չէ, որոշ մարմիններում այս տեղեկությունը առհասարակ բացակայում է, կամ տեղեկատվությունը թերի է,
- պարզ չէ, թե ազդարարման հարցերով պատասխանատու անձինք ինչպես են ապահովում ստացված հաղորդումները ստանալու և ընթացքն ապահովելու գործընթացները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմք ընդունելով ազդարարման պատասխանատու անձանց վերաբերյալ մի կողմից, միջազգային ստանդարտների և փորձի, մասնավորապես՝ ԵՄ և ԱլԳ երկրների փորձը, մյուս կողմից, ազգային օրենսդրության և պրակտիկայի վերլուծությունը՝ առաջարկվում է ՀՀ-ում կատարելագործել ազդարարման հարցով պատասխանատուների ինստիտուտը ըստ ներքո շարադրված առաջարկությունների։

- «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունների մեջ ավելացնել ազդարարման համար պատասխանատու անձի հասկացությունը՝ տալով դրա սահմանումը։
- Սահմանափակել պետական մարմինների և ՏԻՄ-երի՝ ազդարարման հարցերով պատասխանատու անձանց նշանակելու հարցում լայն հայեցողությունը։ Նախատեսել ազդարարման հարցով պատասխանատուների նշանակման ընտրության և նշանակման կարգ, սահմանել թեկնածուին ներկայացվող նվազագույն չափանիշներ, այդ թվում՝ մասնագիտական պահանջներ և անձնական հատկանիշներ, որոնք հատուկ են բարեվարք հանրային ծառայողին։ Ազդարարման հարցերով պատասխանատուին ներկայացվող հիմնական պահանջները կարող են ներառել, բայց չսահմանափակվել հետևյալներով.
    - ունենալ բարձրագույն կրթություն, ցանկալի է իրավաբանության,
    - ունենալ աշխատանքային փորձ հակակոռուպցիոն ոլորտում (նվազագույնը՝ երկու տարի)։
- Հստակեցնել և ավելացնել ազդարարման հարցերով պատասխանատու անձանց դերը և գործառույթների շրջանակը, նախատեսել նրանց կողմից ներքին ազդարարման դեպքերում խորհրդատվության և պարզաբանումների տրամադրման ընթացակարգեր։
- Ազդարարման հարցերով պատասխանատու անձանց համար առանձին կերպով նախատեսել իրավունքներ և պարտականություններ։ Պարտականությունների շրջանակը կարող է ներառել, բայց չսահմանափակվել հետևյալներով.
    - վերապատրաստումներին մասնակցելը,
    - հաղորդակցության և կապի ապահովումը ներքին ազդարարման ընթացակարգով ներկայացրած հաղորդում ներկայացրած անձի հետ (գործող կարգավորումներով՝ միայն **ազդարարի պահանջով** է ապահովվում վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկությունների տրամադրումը),
    - ազդարարի հետ համագործակցությունը,

- ներքին ազդարարման դեպքերում խորհրդատվության և պարզաբանումների տրամադրում:

- Վերացնել այն պրակտիկան, ըստ որի՝ ազդարարման հարցերով պատասխանատուները իրենց այս գործառույթների համադրում են այլ գործառույթների հետ: Սահմանել, որ ազդարարման հարցերով պատասխանատու անձինք բացառապես իրականացնելու են այս պաշտոնից բխող գործառույթները:
- Իրականացնել ազդարարման հարցերով պատասխանատու անձանց կարիքների գնահատում, դրանց հիման վրա իրականացնել կարողությունների զարգացման վերապատրաստումներ:
- Մշակել և ներդնել ազդարարման հարցերով պատասխանատուների գործունեության ապահովման ուղեցույցներ, մեթոդական ցուցումներ և նյութեր: Այս գործողությունը խորհուրդ է տրվում իրականացնել միջազգային և ազգային փորձի, ինչպես նաև պատասխանատու անձանց կարիքների գնահատման արդյունքների հիման վրա:
- Ապահովել ազդարարման հարցերով պատասխանատու անձանց վերաբերյալ ամբողջական և համակարգված տեղեկության հրապարակումը պետական մարմինների և ՏԻՄ-երի կայքէջերում:
- Մշակել և ներդնել ազդարարման հարցերով պատասխանատու անձանց կողմից ստացված հաղորդումները ստանալու և ընթացքն ապահովելու ընթացակարգեր: